

ԲԱԺԻՆ 1. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման հիմքը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներն են, որոնց համաձայն ՀՀ վարչական տարածքը բաժանված է 10 մարզերի՝ 48 քաղաքային ու 866 գյուղական համայնքներով, և Երևանի քաղաքային համայնքի (12 վարչական շրջաններով):

Մեթոդաբանական պարզաբանումներ

Հայաստանի Հանրապետությունում մարդահամարի արդյունքներով հաշվարկվում է բնակչության երկու կատեգորիա՝ առկա բնակչություն և մշտական բնակչություն:

Յուրաքանչյուր վարչական միավորի **առկա բնակչության** թվաքանակի ցուցանիշը ձևավորվել է ՀՀ 2011թ. մարդահամարի ժամանակ դրանում մշտապես (սովորաբար) բնակվող ու հաշվառման պահին ներկա և *ժամանակավոր ներկա* հաշվառված անձանց ընդհանուր թվաքանակների հանրագումարից:

Ժամանակավոր ներկա բնակչության թվաքանակի ցուցանիշում ներառվել են մարդահամարի հաշվառման պահի դրությամբ տվյալ համայնքում՝ քաղաք, գյուղ, տուն (շինություն) կամ ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպությունում, մեկ տարուց պակաս ժամկետով գտնվող անձանց թվաքանակի ցուցանիշները, որոնց մշտական բնակավայրը տվյալ համայնքի (այդ թվում՝ հանրապետության) սահմաններից դուրս է:

Յուրաքանչյուր վարչական միավորի **մշտական բնակչության** թվաքանակի ցուցանիշը ձևավորվել է մարդահամարի ժամանակ տվյալ տարածքում մշտապես (սովորաբար) բնակվող ու հաշվառման պահին ներկա և *ժամանակավոր բացակա* հաշվառված անձանց ընդհանուր թվաքանակների հանրագումարից:

Ժամանակավոր բացակա բնակչության թվաքանակի ցուցանիշում ներառվել են տվյալ համայնքում՝ քաղաք, գյուղ, տուն (շինություն), մշտապես (սովորաբար) բնակվող, սակայն մարդահամարի հաշվառման պահի դրությամբ, տվյալ քաղաքային կամ գյուղական համայնքի (այդ թվում՝ հանրապետության) սահմաններից դուրս՝ մեկ տարուց պակաս ժամկետով բացակայող անձանց թվաքանակի ցուցանիշները (տես՝ «2010թ. մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականներ» մշակված Եվրոստատի հետ համագործակցությամբ, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ, Նյու Յորք և ժն, 2006, գլուխ III «Հաշվառման ենթակա բնակչություն», կետ 167 «Ժամանակավոր բացակայողներ», էջ 56 (ռուսերեն տարբերակ), էջ 37 (անգլերեն տարբերակ)):

